ՅԱՌԱ՜Ջ

(Նադսօնից)

Յառա՜ջ. ցաւ-տանջանք մոռացի՛ր իսպառ.
Փոթորկի առաջ ընաւ մի՛ նահանջիր,
Մութ գիշեր ծագած արշալոյսի վառ
Վա՛ռ ճառագայթի համար մաքառնչիր։
Աշխատի՛ր, քանի ուժ կայ քո բազկում.
Չը կորցնե՛ս երբէք յոյսերըդ պայծառ.
Ցանում գիտութեան եւ լոյսի միշտ դու
Ազնիւ քո կերոն քա՛րծըր, քա՜րծըր տար։
Թո՛ղ քո ճակատին դրօշմնն կըշտամբանք·
Կատաղի ժըխոր թող շտապի փութայ
Իր դատավըճռով՝ խիստ արհամարհանք
Քեզ բաժին հանել, որքա՜ն կամքը տայ:
Կոխ տուած բացած քո ճանապարհով
Գընա՛ դու յառաջ հոգով անվըհատ.
Կեանքի ղըժընդակ փոթորկին սիրով
Դէմ՛ արա լանջը քո երիտասարդ։
Խոր քընածներին ցընցէ, զարթեցրո՛ւ.
Ընկածներին տո՛ւր ձեռքըդ, հա՛ն ոտքի.
Եւ ամբոխի մէջ ճըշմարտութեան դո՛ւ
Խօսքըդ՝ ինչպէս լոյս՝ կենարար ծըգի։

ԽԱԴՈՒՆԻ